ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

«Մանկավարժական միտք» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ–ի գիտական հանդեսների ցանկում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ

ПЕДАГОГИЧЕСКАЯ МЫСЛЬ
PEDAGOGICAL THOUGHT

2021

1 (74)

Հրապարակված է www.zangak.am կայքէջում:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2000 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԹԻՎ 1097

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ARMENUI MIRZOIAN

Mixed Ability Teaching/Differentiated Instruction In High Schools 5

NARINE ABRAHAMYAN

Modeling as an effective technique for bridging active reading with writing 15

ANNA KHACHATRYAN

Simile as a means of characterization in armenian folk tales and legends and its translation into english 25

ՎԱՐԴԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԳԱԳԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Որակական խնդիրների դերը ֆիզիկայի ուսուցման գործընթացում 31

ЭЛОНА АВЕТЯН

Брачно–семейные отношения в современной армении 40

Гаяне Оганнисян

Мотивы и Принципы выбора именперсонажей в романе Х. Абовяна „Раны Армении“ 52

ԱԻԴԱ ԹՈՓՈՒԶՅԱՆ
ՄԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Քրեակատարողական հիմնարկներում դասավանդողներին ներկայացվող կոմպետենցիաներ 59

ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Սոցիալ–մշակութային տեսության արդյունավետությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում 64

ԱՆԱՀԻՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Օտարերկրացի ուսանողների ուսուցման առանձնահատկությունները հայաստանի սոցիալ–մշակութային համատեքստում 72

ԱՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հոմանիշները Պ. Սևակի «Եղիցի լույս» ժողովածուում 81

ԳԱՅԱՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Ինչից են կազմված ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական հմտությունները 87

ԻՐԻՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը երեխայի դաստիարակության գործում 94

ԼԵՅԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թանգարանները դպրոցականների մշակութակրթական զարգացման միջավայր 105

ՄԵՐԻ ՄԱԽՍՈՒԴՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Ինտեգրման նոր մոտեցումներ գրականության բաց դասերին 114

ՆԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

Ուսուցիչ–աշակերտ փոխհարաբերություններն ու սովորողների գիտելիքների, կարողությունների գնահատումը որպես դպրոցականների ուսումնական դրդապատճառների զարգացման պայմաններ 123

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Վահան Տերյանի սիրո պոեմը 132

ՍՈՒԶԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ

Փորձարարական, հետազոտական աշխատանքները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում 140

ԷԴՎԱՐԴ ԱՅՎԱԶՅԱՆ

Բնագիտամաթեմատիկական և հումանիտար գիտություններում դասակարգման տրամաբանական գործողության կիրառության որոշ առանձնահատկություններ 149

ԱՇԽԵՆ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ
ՇՈՂԵՐ ՎԵՐԴՅԱՆ

Գրաբարի դասավանդում ավագ դպրոցում 161

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԱՐԵՔՆԱԶԱՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Աքսիոմատիկ մեթոդը որպես տարրական դպրոցի ուսուցչի «մաթեմատիկա» դասընթացի մասնագիտուղղորդ համակարգ 169

ԱՐԱՔՍՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ուղղագրության ուսուցումը ավագ դպրոցում միջառարկայական կապերի և տեխնոլոգիական գործիքների համատեղ կիրառության միջոցով 176

ՀԵՂԻՆԵ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի դերը հայ նոր գրականության զարգացման գործում 186

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Պարամետր պարունակող հավասարումների և անհավասարումների գրաֆիկական լուծումներ (մեր փորձից) 195

ՌՈՒԶԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ինչպե՞ս կարող է հարցադրումների մեթոդը նպաստել աշակերտների ներգրավվածության բարձրացմանը 203

ՍԵՆՈՒՇԿԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ

«Ուղիղների փունջ» թեմայի շուրջ խնդիրների լուծման իմ փորձը 212

ՍՈՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առած–ասացվածքների ուսումնասիրումը բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում 221

ԱՆԱՀԻՏ ԼԱԶԳԻՅԱՆ
ՆՈՒՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Ֆունկցիայի գրաֆիկի ձևափոխություններ» թեմայի ուսուցման մեր փորձից 229

ՏԻԳՐԱՆ ԹԱՆԳԱՄՅԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՓԻԼԹԱԿՅԱՆ

Կենսաբանական օբյեկտների հուսալիության էվոլյուցիոն հարմարողական բնույթը թեմայի ուսուցման մեթոդաբանությունը և աշխարհայացքային նշանակությունը 237

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ԿՈՐՅՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

«Π» թվի դերն ու նշանակությունը մեր կյանքում. «Π» թվի օր 246

ԿԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

Ուսուցման գործընթացում մաթեմատիկայի պատմության տարրերի կիրառման մեր փորձից 253

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԳԱՐՅԱՆ

Համացանցային հավելվածների կիրառման հնարավորություններն ուսուցման գործընթացում 259

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

Մեդիագրագիտության ինտեգրումը անգլերենի դասավանդման մեջ 266

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ
ԵՐԱՆՈՒՀԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Ժամանակակից էլեկտրոնային կրթական համակարգերի և ռեսուրսների կիրառումը կրթական գործընթացում 276

ՆԱՐԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ
Ուսուցչի հաղորդակցական ռեֆլեքսիայի զարգացման ռազմավարությունը 285

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

ՎԱՐՍԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ–ում ազգային խաղերի դերը և առկա հիմնախնդիրները 294

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ՇԱՔԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Ռուսական դաշնամուրային դպրոցի դերը հայ կատարողական արվեստի զարգացման մեջ 304

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ

ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ
Ֆրանց կաֆկայի գրական գաղափարախոսության ազդեցությունը ֆիլիպ ռոթի ստեղծագործության վրա 313

Մեր հեղինակներ 323

ՆԱՐԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՌԵՖԼԵՔՍԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հաղորդակցման ռեֆլեքսիա» հասկացությունը մեկնվում է նախ և առաջ անձնակենտրոն, փոխներգործուն տեխնոլոգիաների մշակման մեթոդաբանության տեսանկյունից: Ակնհայտ է, որ ուսուցիչը կարող է լուրջ հաջողությունների հասնել իր գործունեության ընթացքում, եթե յուրացրել է միջանձնային հարաբերություններ նախաձեռնելու, ապահովելու հոգեբանական, հանրամշակութային, բուն մանկավարժական բաղադրիչները: Հաղորդակցման մշակույթը ձևավորվում է աստիճանաբար, և մասնագետը, տվյալ դեպքում՝ ուսուցիչը, պետք է մշտապես անդրադառնա, վերագնահատի, վերամաստավորի, վերարժևորի իր գործողությունները, հստակ պատկերացում ունենա իր շփման մերձակա և հեռակա գոտիների մասին: Հաղորդակցման ռեֆլեքսիան այդ առումով անհրաժեշտ պայման է ոչ միայն հաջող, բարենպաստ փոխհարաբերություններ հաստատելու համար, այլև շարժիչ ուժ է նոր մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու, արդյունավետ փոխգործակցության ընթացքում:

Հաղորդակցման ռեֆլեքսիան ուսուցչի հաղորդակցական և մասնագիտական կոմպետենցիաների կարևոր բաղադրիչ է: Ռեֆլեքսիան կախված է նրանից, թե ինչ առարկայական իրականության ենք անդրադառնում: Ըստ այդմ՝ հետազոտողներն առանձնացնում են ռեֆլեքսիայի չորս տեսակ՝ *համագործակցային, հաղորդակցական, մտավոր և անձնային* [12, 31–40]:

«Հաղորդակցման ռեֆլեքսիան», լինելով միջգիտակարգային հասկացություն, մանկավարժահոգեբանական գրականության մեջ կարող է հանդիպել այլ հոմանիշային եզրույթներով՝ «սոցիալական ռեֆլեքսիա», «սոցիալ–հոգեբանական ռեֆլեքսիա», «միջանձնային ռեֆլեքսիա», «շփման ռեֆլեքսիա» և այլն: Այդ հասկացությունները միավորում են սեփական կամ այլոց գործողությունները նոր տեսանկյունից դիտարկելու, քննելու, գնահատելու կարողությունները: Շփման, հաղորդակցման ընթացքում անձը փորձում է գիտակցել, գնահատել նորովի փոխհարաբերությունների դինամիկան, բացահայտել շփման միջանձնային, ներանձնային դրսևորումները:

Քննության առնելով «ռեֆլեքսիա» հասկացությունը լայն իմաստով՝ Ե. Ն. Տկաչը բացահայտում է սոցիալական ռեֆլեքսիայի օրինաչափությունները որպես ուսուցչի մասնագիտական զարգացման պայման [14, 16]: Տիպական օրինաչափություն է այն, որ հաղորդակցման ռեֆլեքսիան հնարավորություն է ընձեռում ուսուցչին մտնելու փոխգործակցող գործընկերոջ դրության մեջ: Այդ համատեքստում ուսուցիչը հանդես է գալիս որպես խորհրդատու, ուղղորդող, արհեստավարժ ֆասիլիտատոր, բայց ոչ գիտելիքների միակ աղբյուր:

Համագործակցային, անձնային և մտավոր ռեֆլեքսիաների զարգացման հիմնախնդիրն է արծարծել Օ. Գ. Աբրամկինան [1, 7]: Նա նույնպես շեշտադրում է ռեֆլեքսիայի համագործակցային–հա-

ղորդակցական գործառույթը: Մտավոր ռեֆլեքսիան ավելի շուտ միջոց է հաջող հաղորդակցություն իրականացնելու ճանապարհին:

Ուսուցչի հաղորդակցման ռեֆլեքսիայի բովանդակային բնութագրերը ներկայացնելու կարևոր պայման է նրա գործառույթների սահմանումը, որոնք, ըստ Ի. Գ. Լիպատնիկովայի, լինում են՝ 1. ընդհանուր ուսումնական գործընթացի կառավարման, 2. անձնային աճի և ինքնազարգացման, 3. հետադարձ կապի ապահովման, 4. գործունեության կազմակերպման և կատարելագործման [9, 36]:

Ակնհայտ է, որ հնարավոր չէ կառավարել որևէ գործընթաց առանց հաղորդակցական ռեֆլեքսիայի: Ինչպես հայտնի է, կառավարման կարևոր պայման է նաև ճիշտ գնահատելու ունակությունը: Ռեֆլեքսիվ գնահատումը հիմնականում իր մեջ վերագնահատման տարր է պարունակում: Շատ դեպքերում մասնագետը փորձում է գնահատել իր գնահատման դրսևորումները, մոտեցումները, գնահատման արդյունքները: Ինչպես հայտնի է մանկավարժության տեսությունից, միայն ճիշտ գնահատման համակարգն է նպաստում ինքնագնահատման մշակույթի ձևավորմանը: Պատահական չէ, որ Ա. Վ. Կարպովը, առանձնացնելով ռեֆլեքսիայի մակարդակները, մեծ տեղ է հատկացնում տվյալ իրադրությունում անձի ռեֆլեքսիվ գնահատական տալու ունակությանը [7, 45–57]:

Բավականին արդյունավետ է գնահատվում հաղորդակցման ռեֆլեքսիայի սահմանման համատեքստում Ա. Գ. Սամոխվալովայի մոտեցումը, ըստ որի՝ նպատակահարմար է դիտարկել ռեֆլեքսիան հետևյալ երեք մակարդակում.

1. *Զարգացման ցածր մակարդակ*: Սովորողները միայն հազվադեպ են լինում ունակ վերլուծելու առանձին հաղորդակցական գործողությունները: Հաղորդակցական ռեֆլեքսիան իրադրային է և ոչ ամբողջական, միտված չէ հաղորդակցական ոլորտում ինքնակատարելագործման:

2. *Զարգացման միջին մակարդակ*: Սովորողները հիմնականում կողմնորոշված են վերլուծելու իրենց հաղորդակցական գործողությունների արդյունավետությունը: Հաղորդակցման ռեֆլեքսիան մշտապես ուղղված է հաղորդակցական ոլորտում ինքնադիտմանը և ինքնավերլուծությանը:

3. *Զարգացման բարձր մակարդակ*: Հաղորդակցման ռեֆլեքսիան համարվում է սովորողի մտածողության սկզբունքը, որն ուղղված է ոչ միայն հաղորդակցական վարկանիշը ինքնավերլուծելուն, այլև ինքնափոփոխվելուն [11], [5]:

Մանկավարժության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաղորդակցման ռեֆլեքսիայի կարողությունն անհրաժեշտ է զարգացնել՝ հաշվի առնելով փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության և նրան հարակից այլ գիտությունների զարգացման միտումները: Գործնականում մանկավարժական վարպետությունն ուսուցչի հաղորդակցման ռեֆլեքսիայի զարգացման անսպառ աղբույր է, եթե հաշվի ենք առնում նրա շարժընթացը թե՛ մասնագիտական գիտելիքների, թե՛ շփման կարողությունների ձևավորման մակարդակներում: Ինչպես նշում է Ն. Ի. Սորոկինան. «Բուն մանկավարաժական արտիստիզմն իր բնույթով ներառում է ինքնաճանաչողության և այլոց ճանաչելու, ինքնաիրացման և ստեղծագործական ինքնաարտահայտման հնարավո-

րությունները» [13, 12]:

Այսպիսով՝ ուսուցչի հաղորդակցական ռեֆլեքսիան փոխներգործուն ուսուցում իրականացնելու կարևոր պայման է: Ըստ այդմ՝ խնդիր է դրվում ստեղծելու ռեֆլեքսիվ միջավայր, որը հիմնականում հիմնված է հաղորդակցման ռեֆլեքսիայի կարողությունների վրա:

Ուսուցիչը պետք է կարողանա ոչ միայն վերլուծել, գնահատել և ուղղել իր՝ մանկավարժական բնույթի սխալները, այլև պետք է վերհանի իր հաղորդակցական հաջողությունները և ձախողումները: Արդյունավետ հաղորդակցման կարևոր պայման է հանդուրժողականությունը, երբ ուսուցիչն ըմբռնումով է մոտենում իր հասցեին արվող սովորողների և գործընկերների քննադատությանը: Այստեղ խոսք է լինում ռեֆլեքսիվ գործունեություն ծավալելու մասին է ուսուցման և դաստիարակության բոլոր փուլերում և մակարդակներում:

Հոգեբանամանկավարժական գրականության մեջ «ռեֆլեքսիա» հասկացությունը նախ և առաջ սահմանվում է գործունեության տեսության տեսանկյունից այն առումով, որ մեկնվում է սուբյեկտի կողմից որպես իր գործունեության ճանաչողական կամ հուզական մակարդակներում գիտակցման գործընթաց: Հաղորդակցության տեսության տեսանկյունից «ռեֆլեքսիա» հասկացությունը նոր գործառական, բովանդակային բնութագրեր է ձեռք բերում: Առաջին պլան են մղվում անձի ինքնավերլուծական կարողությունները:

Պատահական չէ, որ հաղորդակցական–ճանաչողական մոտեցման ներկայացուցիչները հիմնականում մասնագիտական ռեֆլեքսիայի կարևոր բաղադրիչ են համարում ինքնաճանաչումը, ինքնագնահատումը և ինքնավերլուծությունը: Ուսուցչի փոխգործակցությունն աշակերտների և գործընկերների հետ պահանջում է շարունակաբար զարգացնել ինքնաճանաչման, ինքնագնահատման, ընդհանարապես ինքնավերլուծության կարողությունները ոչ միայն մասնագիտական, այլև հաղորդակցական մակարդկներում:

Այդ համատեքստում առաջին պլան է մղվում «մանկավարժական իրադրություն» հասկացությունը: Երբ մանկավարժը փորձում է հասկանալ, բացահայտել իր հաղորդակցման առանձնահատկությունները, նա ավելի համբերատար, հանդուրժող է դառնում: Այդպիսի մանկավարժներին համարում են ռեֆլեքսիվ–ճանաչողական ոճի ուսուցիչներ: Նրանք ավելի արագ են բացահայտում իրենց սխալները: Ավելին՝ նրանք հեշտությամբ են քննության առարկա դարձնում իրենց թերացումները ու վրիպումները: Ռեֆլեքսիվ–ճանաչողական ոճի մանկավարժներից էականորեն տարբերվում են իմպուլսիվ ոճի մանկավարժները, որոնք հիմնականում շատ ծանր են տանում հաղորդակցական և այլ բնույթի սխալները: Ըստ նրանց՝ «լավ ուսուցիչը գրեթե չի սխալվում»: Ավելին՝ այդպիսի մտայնությունը պարարտ հող է ստեղծում ոչ միայն սեփական, այլև սովորողների սխալներն անհրաժեշտ քննության առարկա դարձնելու համար: Շտապողականությունը, ամեն ինչ ժամանակին անելու ցանկությունը ստեղծում են հոգեբանական լարվածություն, որը փոխանցվում է սովորողներին:

Հաղորդակցման ռեֆլեքսիան հաղորդակացական կոմպետենցիայի առանցքային բաղադրիչ է: Այս հասկացությունների բովանդակային բաղադրիչների համեմատությունը թույլ է տալիս վերհա-

նել նրանց ընդհանրությունները: Հաղորդակցական ցանկացած գործողություն ենթադրում է ինքնավերլուծություն: Շփման ընթացքում անձը փորձում է գիտակցել իր հույզերի, զգացմունքների առաջացման պատճառները, դրսևորումները, դրանք կառավարելու մեթոդները:

Վերլուծելով «հաղորդակցման ռեֆլեքսիա» հասկացությունն ըստ հաղորդակցական կոմպետենցիայի բաղադրիչների՝ կարելի է բացահայտել անձի՝ ռեֆլեքսիայի առանձնահատկությունները ըստ ճանաչողական, դրդապատճառային, արժեքային, վարքագծային ոլորտների: Ճանաչողական կամ գիտելիքի ձեռք բերման մակարդակում ուսուցչի հաղորդակցման ռեֆլեքսիվ կարողությունները միտված են ավելի արդյունավետ դարձնելու գիտելիքի յուրացման գործընթացը: Այս պարագայում ուսուցիչը հանդես է գալիս որպես ֆասիլիտատոր: Դրդապատճառային մակարդակում խնդիր է դրվում շահագրգռելու սովորողներին ստեղծելու հիմնախնդրային իրավիճակներ, ցույց տալու գիտելիքի յուրացման հեռանկարը: Արժեքային կամ ակսեոլոգիական մակարդակում փորձ է արվում ձևավորելու ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունք, իմաստավորելու փոխուսուցման, փոխգործակցության ընթացակարգերը:

Հաղորդակցական ռեֆլեքսիայի բարձրակետ է համարվում սովորողների ռեֆլեքսիվ վարքագծի ձևավորումը, որը հաղորդակցական վարքագծի անկյունաքարն է: Սովորողն այդ մակարդակում մշտական ինքնավերլուծության, ինքնագնահատման նպատակներ է հետապնդում: Այստեղ առաջ են մղվում ոչ միայն ակադեմիական, այլև անձնային որակները: Մասնավորապես այդ որակներից կարելի է առանձնացնել ինքնուրույն որևէ աշխատանք նախաձեռնելու, հանձնարությունը կատարելու կարողությունները, տարբեր ուսումնական և ոչ ուսումնական պայմաններում հաղորդակցվելու ունակությունը, ինքնազարգացման ձգտումը, օբյեկտիվ ինքնագնահատական տալու ունակությունը և այլն:

Մարդ էակը երբեք չի դադարում իմաստավորելուց իր սեփական գործողությունները, հոգեվիճակները, հույզերն ու սպասումները: Առանց ռեֆլեքսիվ մտածողության անձը ի վիճակի չէ հասկանալու ինքն իրեն, վերահսկելու և կառավարելու սեփական գործողությունները:

Հաղորդակցման ռեֆլեքսիան ուսուցչի մասնագիտական հաղորդակցական վարքագծի ձևավորման կարևոր պայման է, հատկապես երբ խոսք է լինում հաղորդակցական ռազմավարությունների և մարտավարությունների կիրառման, խոսքային և ոչ խոսքային մանկավարժական փոխազդեցության միջոցների ընտրության և կիրառման մասին:

Կարևոր է նշել, որ հաղորդակցական ռազմավարությունը մանկավարժական խոսույթի շրջանակներում միտված է հաղորդակցական նպատակի կատարմանը: Այդ համատեքստում Վ. Ի. Կարասիկն առանձնացնում է բացատրող, նպաստող, գնահատող, վերահսկող, կարգավորող ռազմավարությունները [6, 3–18]: Ակնհայտ է, որ նշված ռազմավարությունները վերաբերում են ոչ միայն սովորողների հետ փոխգործակցության կառավարմանը, կարգավորմանը, դրանց գնահատմանը, այլև ուսուցչի հաղորդակցական վարքագծի շարունակական բարելավմանը:

Ռեֆլեքսիվ բաղադրիչը բնորոշ է նաև

հաղորդակցական ռազմավարությունների այլ դասակարգումներին: Օրինակ՝ Մ. Յ. Օլեշկովն առանձնացնում է մանկավարժական խոսույթի չորս հաղորդակցական ռազմավարություն՝ տեղեկատվական–փաստարկող, մանիպուլյատիվ–համախմբող, արտահայտիչ–հասցեագրող և վերահսկող–գնահատող [10, 16–29]:

Ն. Ա. Անտոնովան առանձնացնում է ուսուցչի խոսքային վարքագծի երեք ռազմավարություն՝ իմպերատիվ, տեղեկատվական և հաղորդակցական–կարգավորող [2, 23–236]: Նշված ռազմավարությունների բովանդակային բնութագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին պլան են մղվում տեղեկատվական և գնահատողական կամ կարգավորման, վերահսկման ռազմավարությունները: Ուսուցիչը թե՛ տեղեկատվության հաղորդման, թե՛ գիտելիքների գնահատման և թե՛ ուսուցման գործընթացի կարգավորման–վերահսկման գործընթացում պետք է գիտակցի իր գործողությունները, բացահայտի իր և սովորողների հաղորդակցական ձախողումները: Ընդ որում՝ պետք է նա ճիշտ գնահատի մանկավարժական իրադրությունը: Կարևորվում է այդ համատեքստում ռեֆլեքսիվ գործունեության արագությունը, որոշում ընդունելու հաստատակամությունը, դրական հուզական դաշտ ստեղծելու ունակությունը:

Հաղորդակցման ռեֆլեքսիայի մակարդակի բարձրացման կարևոր պայման է հաղորդակցական–գործաբանական ռազմավարության կիրառումը, որը նպաստում է երկխոսական փոխազդեցության արդյունավետ կազմակերպմանը, հիմնվում է սոցիալական խոսքային վարքագծի ստանդարտացված նորմերի վրա: Ըստ Ա. Ռ. Գաբիդուլլինայի. «Հաղորդակցական–գործաբանական ռազմավարությունը որոշվում է վարքագծի մասին գոյություն ունեցող պատկերացումներով» [4, 134]: Խնդիր է դրվում նշված ռազմավարության կիրառման միջոցով հաղթահարելու վարքագծային կարծրատիպերը, փոխելու հաղորդակցվողների նպատակադիրքորոշումները և այլն:

Կարելի է պնդել, որ ուսուցչի ռեֆլեքսիվ մտագործունեությունը ենթադրում է նրա հաղորդակցական վարքագծի շարունակական կատարելագործում, որը հիմնված է ինքնաուսումնասիրության, պատճառահետևանքային կապերի վերլուծության, արժեքային համակարգի մշտական վերանայման վրա:

«Հաղորդակցման ռեֆլեքսիա» հասկացությունը չի ենթադրում միայն հաղորդակցման ընթացքում ինքնաճանաչման գործընթաց, այլև հաղորդակցական բնույթի սխալները, ձախողումները բացահայտելու, վերլուծելու, շարունակաբար շտկելու գործընթաց:

Ժամանակին և ճիշտ գնահատելով իր գործունեության ուժեղ և թույլ կողմերը՝ ուսուցիչը կարողանում է հաղորդակցման ճիշտ ռազմավարություն ընտրել: Դա նշանակում է տիրապետել հաղորդակցման բազմաբնույթ միջոցների, ճիշտ պատկերացում ունենալ հաղորդակցման գործառույթների ու ոճերի մասին, կիրառել փոխներգործության, փոխգործակցության ժամանակակից տեխնոլոգիաներ, հաստատել սովորողների շրջանում բարենպաստ փոխհարաբերություններ: Լինելով մանկավարժական վարպետության կարևոր բաղադրիչ, հաղորդակցման ռազմավարությունը հնարավոր է ճիշտ ընտրել, հաշվի առնելով դասավանդողների մասնագիտական կոմպետենցիայի

մակարդակը, մանկավարժական տակտը պահպանելու ունակությունը, սեփական ֆիզիկական և հոգեկան վիճակը կառավարելու կարողությունը:

Հաղորդակցման ռեֆլեքսիայի բարձր մակարդակը ենթադրում է համարժեք արձագանքել սովորողների խոսքային, հաղորդակցական վարքագծի դրսևորումներին, ճիշտ և արագ կողմնորոշվել տարբեր մանկավարժական իրավիճակներում, կիրառել համարժեք կոնֆլիկտահարթիչ ռազմավարություն, ստեղծել փոխադարձ հարգանքի ու սիրո մթնոլորտ:

Սկզբունքային նշանակություն ունի դասավանդողների ուսումնադաստիարակչական իրադրությունների դիագնոստիկայի և կանխատեսման կարողությունների զարգացումը: Նրանք պետք է կարողանան ռեֆլեքսիայի տարբեր հնարների կիրառման միջոցով ապահովել ուսուցման և ուսումնառության հետադարձ կապը:

Ծրագրելով և նախագծելով ուսումնադաստիարակչական գործընթացը՝ ուսուցիչը հանդես է գալիս որպես հաղորդակցության փորձագետ: Ինչպես նշում է Լ. Ա. Բարաբոշկինայի, Զ.Ռ.Վալիշինայի և նրանց գործընկերների կողմից ստեղծված հեղինակային խումբը. «Մանկավարժը հանդես է գալիս որպես տեղեկույթի մատուցման, հաղորդակցության, ինչպես նաև վերլուծաբան փորձագետ» [3, 1–6]:

Որպես հաղորդակցության փորձագետ՝ ուսուցիչը սկսում է զբաղվել ուսումնադաստիարակչական փոխգործակցության հարցերով: Նույն հեղինակներն այդ պարագայում հաղորդակցման ռեֆլեքսիային համարժեք գործածում են «փոխներգործուն ռեֆլեքսիա» եզրը: Փոխներգործուն ռեֆլեքսիայով օժտված անձին բնորոշ է մտքի ճկունությունը, գործողությունների արագությունը և շրջահայացությունը:

Այսպիսով՝ ըստ նույն հեղինակների՝ ուսուցիչը ռեֆլեքսիայի ընթացքում հանդես է գալիս որպես տեղեկատվության մատուցման փորձագետ: Այդ պարագայում նրան բնորոշ է նախագծող ռեֆլեքսիան: Ակնհայտ է, որ առանց այդպիսի կարողունակության՝ հնարավոր չէ ճիշտ գնահատել տվյալ մանկավարժական իրադրությունը, գնահատել սովորողներին, ապահովել հետադարձ կապ: Փոխներգործուն ռեֆլեքսիա իրականացնող մանկավարժը հանդես է գալիս որպես հաղորդակցության փորձագետ: Ինչքան բարձր է փոխներգործուն ռեֆլեքսիայի մակարդակը, այնքան արդյունավետ է ուսումնադաստիրակչական գործընթացը: Հանդես գալով որպես հետազոտող–վերլուծաբան՝ ուսուցիչն իրականացնում է դիտարկող ռեֆլեքսիա: Այն մանկավարժական դիտման ավելի բարձր աստիճան է ենթադրում: Աստիճանաբար բարդանում է նաև հետազոտական–մեթոդական, մեթոդաբանական գործիքակազմը [3, 1–6]:

Այսպիսով, ինչպես Լ. Ս. Կոժուխովսկայան և Ի. Վ. Պոզնյակն են նշում. «Հաղորդակցման ռեֆլեքսիան հանդես է գալիս որպես հաղորդակցական ակտի, միջանձնային ընկալման կարևորագույն բաղադրիչ» [8, 1–21]:

Կարելի է պնդել, որ հաղորդակցման ռեֆլեքսիան ոչ միայն հաղորդակցական, այլև մասնագիտական կոմպետենցիայի կարևորագույն բաղադրիչն է: Դա հնարավոր է հիմնավորել նեղ մասնագիտական մանկավարժական ռեֆլեքսիվ կարողությունների և հմտությունների ձևավորման մակարդակում: Թե՛ մասնագիտական, թե՛

հաղորդակցական մակարդակում առաջին պլան են մղվում սովորողների և գործընկերների հետ փոխգործակցության, որոշակի մանկավարժական իրադրությունում միջանձնային փոխհարաբերություն կազմակերպելու, մանկավարժական հիմնախնդրի վերլուծության գծապատկերային նախագծման, առաջ եկող մանկավարժական գաղափարներ ռեֆլեքսիվ գիտակցելու կարողությունները: Նշված մակարդակներում առանձնահատուկ նշանակություն ունեն նաև ոչ ստանդարտ իրավիճակներում որոշումներ կայացնելու, սեփական մանկավարժական գործունեության փորձի վերլուծության, մանկավարժական իրադրությունը համարժեքորեն գնահատելու, սեփական մանկավարժական կոմպետենցիայի օբյեկտիվ գնահատման կարողությունները:

Եզրակացություն: Ռեֆլեքսիան մասնագիտական–մանկավարժական կոմպետենտության կարևոր բաղադրիչ է: Ցանկացած բանական մարդու բնորոշ է ռեֆլեքսիվ մտածողությունը, քանի որ ինքնաճանաչման գործընթացը շարունակական բնույթ ունի: Փոխներգործուն մեթոդներով աշխատելու նախապայմաններից մեկը հաղորդակցման ռեֆլեքսիայի շարունակական զարգացումն է: Եթե ուսուցիչը ինքնավերլուծության, ինքնաքննադատության ձգտում չունի, նա չի կարող բացահայտել սեփական սխալներն ու ձախողումները, ճիշտ գնահատել իր և սովորողների առաջադիմությունը: Հաղորդակցման ռեֆլեքսիայի կարևոր դրսևորում է սեփական սխալների ընդունումը և անգամ քննարկումը գործընկերների և սովորողների հետ: Սովորողին պետք չէ ներշնչել այն գաղափարը՝ իբր լավ մանկավարժը անսխալական է: Անհրաժեշտ է ձևավորել սովորողների շրջանում սխալները բացահայտելու, վերլուծելու, ինքնուրույն կամ համատեղ հաղթահարելու մշակույթ: Ռեֆլեքսիվ հաղորդակցման կոմպետենցիան օգնում է հաղթահարելու անսխալականության բարդույթը մանկավարժի մասնագիտական պարտականությունների կատարման, հաղորդակցման բոլոր փուլերում:

Կարևոր է նշել, որ առանց հաղորդակցման ռեֆլեքսիայի համապատասխան տեխնոլոգիաների կիրառման հնարավոր չէ շարունակաբար զարգացնել ուսուցչի մանկավարժական վարպետությունը, զարգացնել նրա խոսքի տեխնիկան, կիրառել հաղորդակցման բազմաբնույթ ռազմավարություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абрамкина, О. Г., Учебный диалог как средство формирования коммуникативной культуры обучающихся: автореф. дис.... канд. пед. наук / О. Г. Абрамкина, Белгород, 2003, 23 с.
2. Антонова Н. А. Стратегии и тактики педагогического дискурса // Проблемы речевой коммуникации: Межвуз. сб. науч. трудов, Саратов, Колледж, 2006, с. 230–236.
3. Барабошкина Л. А., Валишина З. Р. И др. Профессиональная рефлексия как условие продуктивной педагогической деятельности// https://urok.1sept.ru/articles/, 2016, с. 1–6.
4. Габидуллина А. Р. Педагогическая лингвистика: учеб. пособ. для студентов высш. учеб. завед. – Горловка: ГПИИЯ, 2011. – 238с.
5. Дроздова, С.А. Взаимосвязь содержательных характеристик рефлексии со структурными компонентами идентичности личности: дис. …канд. псих. наук / С.А Дроздова. – Хабаровск: 2011. – 213с.
6. Карасик В. И. Характеристика педагогического дискурса // Языковая личность: аспекты лингвистики и лингводидиактики: Сб. науч. тр. – Волгоград: Перемена, 1999. –С. 3 – 18.
7. Карпов, А.В. Психология рефлексии / А.В. Карпов, И.М. Скитяева. – М.: Изд–во „Институт психологии РАН“, 2002. –320с.
8. Кожуховская Л. С., Позняк И. В. Рефлексивные техники, методы и приемы// https://nougazprom.mskobr.ru/files/refleksivnye_tehniki_metody_i_priemy.pdf. 2009. – С. 1–21.
9. Липатникова, И.Г. Рефлексивный подход к обучению математике учащихся начальной и основной школы в контексте развивающего обучения: дисс. …доктора пед. наук / И.Г. Липатникова. – Екатеринбург: 2005. – 397 с.
10. Олешков М. Ю. Коммуникативно–речевые стратегии в институциональном дискурсе // Вестник Пятигорского государственного лингвистического ун–та. – 2006. – № 3. – С. 16 – 29.
11. Самохвалова, А.Г. Формирование коммуникативного компонента индивидуального стиля мышления педагогической деятельности будущего учителя: дис. …канд. пед. наук / А.Г. Самохвалов. – Кострома: 1998. – 185 с.
12. Семенов И.Н., Степанов С.Ю. Психология рефлексии: проблемы и исследования // Вопр. психологии. 1985. – № 3. – С. 31–40.
13. Сорокина Н.И. Развитие коммуникативной рефлексии будущего учителя в образовательном процессе вуза средствами педагогического артистизма: дисс.... канд. пед. наук: Дальневост. гос. гуманитар. ун–т.– Благовещенск, 2008.– 176 с.
14. Ткач, Е.Н. Социальная рефлексия учителя как условие и средство его профессионального саморазвития: автореф. дис.... канд. психол. наук: Хабар. гос. пед. ун–т. – Иркутск, 2000. – 22с.

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՌԵՖԼԵՔՍԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ն. ՄԱՏԻՆՅԱՆ

Հոդվածում քննության են առնվում «հաղորդակցման ռեֆլեքսիա» հասկացության ժամանակակից սահմանումները գործունեության, հաղորդակցական, ճանաչողական տեսությունների տեսանկյունից, հանգամանորեն ներկայացված են հաղորդակցման կոմպետենցիայի ձևավորման և զարգացման հոգեբանամանկավարժական պայմանները, տեխնոլոգիաները և ռազմավարությունները: Բացահայտված են հաղորդակցման ռեֆլեքսիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիաների զարգացման բոլոր փուլերում:

СТРАТЕГИЯ РАЗВИТИЯ КОММУНИКАТИВНОЙ РЕФЛЕКСИИ УЧИТЕЛЯ

Н. МАТИНЯН

В статье рассматриваются совремменые дефеницции понятия „коммуникативная рефлексия“ с точки зрения теорий деятельности, коммуникации и когнтивизма, всесторонне предсавлены психоло–педагогические условия, технологии и стратегии формирования и развития коммуникативной рефлексии. Выявлены особенности формирования и развития коммуникативной рефлексии на всех этапа развития профессиональной и коммуникативной компетенций.

STRATEGY FOR THE DEVELOPMENT OF THE TEACHER'S COMMUNICATIVE REFLECTION

N. MATINYAN

The article examines the modern definitions of the concept of "communicative reflection" from the point of view of theories of activity, communication and cognitive development, comprehensively presents the psychological and pedagogical conditions, technologies and strategies for the formation and development of communicative reflection. It reveals the peculiarities of the formation and development of communicative reflection at all stages of the development of professional and communicative competencies.

Բանալի բառեր: Հաղորդակցման ռեֆլեքսիա, հաղորդակցական կոմպետենցիա, մասնագիտական կոմպետենցիա, մանկավարժական պայման, փոխներգործուն մեթոդներ, ինքնավերլուծություն, ինքնագնահատում, ինքնաճանաչում, տեխնոլոգիա:

Ключевые слова. Коммуникативная рефлексия, коммуникативная компетентность, профессиональная компетентность, педагогическое условие, интерактивный метод, самоанализ, самооценка, самопознание, технология.

Key words. Communicative reflection, communicative competence, professional competence, pedagogical condition, interactive method, self–analysis, self–evaluation, self–cognition, technology.